



### 37. ԳԻԺ ԱՂՋՈՐ, ԽԵԼՈՔ ԱՂՋՈՐ ՆԱՌԱԾ

Ժամանակով էրկու աղպեր կային, մեկը խելոք էր, մեկը՝ գիծ։  
Խելոքը պսակված էր, Գիծը աղապ էր։ Մի քանի տարուց եղը Գիծն  
ասեց. — Իմ բաժինը տո՛ւ, ես բաժանվում եմ։

Խելոք աղպերն ասեց. — Ի՞նչ կա, որ ինչ տամ։

Ասեց. — Զիլնի՛, պտի բաժանվեմ ես։

Երոր շատ զալմաղալ արեց, ասեց. — Ունեցած-շունեցածներն  
մի եղ ա, էն էլ տար քե՛զ։

Էզսի օրը Գիծ աղպերը պարանը դրեց եղան շլինքը, վե կա-  
լավ տարավ։

Շատ տարավ, քիչ տարավ, տարավ տեսավ մի մենծ քար կա,  
տարավ եղը կապեց էղ քարիցը, ասեց. — Մենծ աղպե՛ր, իմ եղան  
զինը էրկու ոսկի ու կես ա, ըսօր, գիտամ, միջոց շունես, էղուց  
կգամ, կտանեմ փողը։ — Եղ դառավ, էկավ տուն։

Աղպերը հարցրեց, ասեց. — Ընչի՛ տվիր եղը։

Ասեց. — Էրկու ոսկի ու կիսի. — Ասեց. — Էգուց կէթամ, կրերեմ։

Էն էզսի օրը զնաց, տեհավ, որ գիլանը, արշերը կաննած եղա-  
նը ուտում են, ասեց. — Իշխանավոր աղպըրտա՛նք, եղը որ փայ եր  
արել՝ ուտում եք, իմ փողը ե՛բ պտի տաք։

Էլի ինքն իրան ասեց. — Թա՛ն չկա, ըսօր, գիտամ, մաշալ շու-  
նեք, էգուց կգամ, կտանեմ։

Թողաց գնաց տուն:

Աղպերը էլի հարցրեց.—Փողը բերի՞ր:

Ասեց.—Ի՞նչ բերեմ, փայ ու փուշկ են անում, դոնախլըդ էր ինչ էր, մաշալ չունեին, մնաց էգուց էթամ բերեմ:

Էգսի օրը վե կացավ գնաց: Գնաց տեհավ ազոավ ա, ալափըս-տրակ ա, վրին կանած ոսկոներն են կոծում:

Ասեց.—Բա՛րե ձեղ, պումուր աղպերտինք, բա իմ փողը ե՞բ պտի տաք: Տենում իմ ձեղ մաշալ չունեք, թո՛ղ մնա, էգուց կգամ, կտանեմ:

Թողաց ու գնաց:

Գնաց տուն, էլի աղպերը հարցրեց, թե.—Փողը բերի՞ր:

Թե.—Չէ՛, պումուր աղպրտանքը մաշալ չունեին, թողի էկա, էգուց կէթամ, կրերիմ:

Էգսի օրը վե կացավ, գնաց: Գնաց տեհավ օքմին չկար, անց կացավ քարի էն յանը, տեհավ Աղվեսը տափ ա կացել: Աղվեսը որ զրան տեհավ, վե կացավ, փախավ:

Զեն տվեց քամակիցը.—Քավո՛ր, քավո՛ր, կանինի, փողս տո՛ւ:

Աղվեսը փախավ, էդ էլ ընկավ քամակիցը: Շատ գնաց, քիշ գնաց, Աղվեսը գնաց հայսավ իրա բումը: Էդ էլ քամակիցը մտավ ըդրա բումը:

Մտավ՝ տեհավ որ մի դիճը ոսկի ա կիտած, մի դիճը արծաթ ա կիտած, մի դիճը սև փող ա կիտած, ասեց.—Քավո՛ր; իմ փողը տո՛ւ, ես էթամ:

Քավորը բան շխոսաց: Մեկ, էրկու, իրեք հետ ասեց, տեհավ քավորը բան շխոսաց, գնաց իրա ձեռովը էրկու ոսկի վե կալավ, մեկն էլ վե կալավ ատամովը կիսեց, կեսը քցեց դեն, էրկու ոսկի ու կեսը դրեց շերը, մի գունդ էլ էն արծաթիցը վե կալավ, ասեց.—Քավո՛ր, էս էլ շինեմ ինձ ծամոն,—կռացավ, մի գունդ էլ վե կալավ, ասեց,—էս էլ տանեմ իմ աղպորը: Դե, մնաս բարո՛վ, քա-վո՛ր, ես գնացի:

Վե կացավ գնաց տուն:

Մենձ աղպերն ասեց.—Բերի՞ր:

Ասեց.—Հա՛, քավորս կուսս բռնեց, տարավ իրանց տումը:

Ասեց.—Փողը տեհանք, հլա՛:

Հանեց, շանց տվեց, տեհավ էրկու ոսկին սաղ ա, մեկը ատա-մով կտրած ա:

Աղպերն ասեցի — Էս լսի՞ ես շարդի ըստնց:

Ասեց. — Իմ հախը էրկու ոսկի ու կես էր, ես կիսեցի, վե կալաւ:

Ասեց. — Շա՞տ կար ընտեղ:

Ասեց. — Ա'րի էթանք, էլի բերենք:

Ասեց. — է'թանք:

Վե կացան ամեն մեկը մի մի մեշոկ վե կալան, գնացին: Երոր հասան Աղվեսի բունը, տեհան Աղվեսը ընտեղ չի, իրանք լցրեցին շվալները ուսկով, վե կալան էկան:

Երոր իրանց զեղին մոտեցան, տեսան լիսը սկսում ա բացվիլը, Խելոք աղպերը եղին-եղին գնաց տուն, որ մարդ չտենա, համա Գիծ աղպերը ծանդր-ծանդր էթում էր:

Գնաց, մտավ գեղի մեջը, գղիրը պատահեց, ասեց. — Էդ ի՞նչ ա:

Ասեց. — Ուկի ա, ի՞նչ ա:

Ասեց. — Տո' գիծ, ըդքան ոսկի կըլնի:

Ասեց. — Քեզ ի՞նչ, ես իմ քավորի տանիցն եմ բերում:

Ասեց. — Մեկը տա՞ս էս իմ տղին:

Մեղոկը վե դրեց, ասեց. — Ա'ռ էս մեկը քու տղին:

Ասեց. — Մինն էլ տա՞ս իմ աղջկանը:

Ասեց. — Ա'ռ:

Ասեց. — Մինն էլ տա՞ս իմ կնկանը:

Ասեց. — Ա'ռ:

Ասեց. — Մինն էլ տա՞ս ինձ:

— Շան որդի, — ասեց, — իմ փողը պտի հատացնես, հասավ մի ոտք դրեց մի ոտի վրեն, էն մեկել ոտիցը քաշեց՝ էրկու արեց, դեն քցեց:

Խելոք աղպերը փողը եղին-եղին տարավ տուն, վե դրեց ու լկավ:

Էկավ, տեհավ, որ աղպերը գեղի դրային կաննած ա, գլորի շամդակն էլ ընտեղ ընկած ա, ասեց. — Խի՞ ես սըպանել սրան:

— Բա ի՞նչ անեմ, մեկը ուզեց՝ տվի, մեկն էլ ուզեց՝ տվի, մեկն էլ ուզեց՝ էլի տվի, շկշտացավ, էլի ուզեց, տվի սըպանեցի:

Խելոք աղպերը ըտեղ ֆողը քանդում ա, գղրին ճիստում ա մեջը, որ չդտնեն:

Թողում են, էթում տուն:

Էրկու, իրեք օրից եղը իմանում են, որ գղիրը սըպանվել ա,

ասում են.— Ո՞վ արած կը լինի, ով արած չի լինի. Կա չկա, Խելոք  
աղպերն ու Գիծ աղպերը արած կը լինեն:

Գալիս են բռնում են, էրկարն էլ տանում են: Տանում են մի հո-  
դի մեջ բռնում են, Խելոք աղպորը պարանով են կապում, Գիծ աղ-  
պորը մնչըլով: Գալիս ա ճաշվա վախտը, սովածանում են:

Գիծ աղպերը ասում ա.— Սոված եմ ես:

Խելոք աղպերն ասում ա.— Ես ի՞նչ անեմ, Հաց ո՞րդիան ա ըս-  
տեղ, դու հացի դարդն ես, չե՞ս գիղա, Հրես կդան՝ մեղ կխեղդեն:

— Պտի խեղդե՞ն,— ասում ա Գիծ աղպերը ու թափ տալի ժըն-  
շիլը կտրում, ուզում ա փախնի:

Խելոք աղպերն ասում ա.— Ի՞նչ կը լինի, իմ պարանն էլ կտրես,  
իրար հետ փախչենք:

— Խի՞— ասում ա,— ես իմ մնշիլը կտրեցի, դու քու պարանը  
չես կարա կտրի:

— Զէ՞ լէ՞ ա'րի ու կտրա:

Գիծ աղպերը քաշում ա կտրում, Խելոքը սկսում ա փախնիլ,  
Գիծը տենում ա ըստեղ մի պղինձ կա, էթում վեր ա ոմում, քցում  
ա շալակը, ընկնում աղպոր ետեկցը էթում:

Աղպերն ասում ա.— Էդ պղինձն ի՞նչ ես բեռ արել. վե քցա,  
փախնենք, էթանք:

— Խի՞ վե քցեմ, սովոր եմ, տանեմ, կերակուր էփեմ, ուտեմ:

Փախնում են, էթում ուրիշ երկիր: Արեւը տալիս ա, մութն ընկ-  
նում ա էդ աղպերի կշտին, էդ աղպերի գլխին նստում են: Նստում են,  
տենում են զանգուակի ձեն ա գալի:

Մենք աղպերն ասում ա.— Վե՛ կաց, նիլնենք ծառը, կարող ա  
մեր գեղից մարդ ըլնի, մեղ ճանանչեն:

Գիծ աղպերն էլ Խելոքի քամակիցը պղինձը քաշ տալո՞վ, քաշ  
տալո՞վ նիլնում ա ծառը:

Խելոքն ասում ա.— Ի՞նչ ես քաշ տալի էդ պղինձը, թող մնա  
ըտեղ:

— Զէ՞— ասում ա,— զան տանե՞ն:

Նստում են ճղբերի վրեն, մի քիշ անց ա կենում, տենում են  
մի քաղրդյան էկավ, բեռները վե դրեց էդ ծառի տակը, կրակ արե-  
ցին, ըսկսեցին կիրակուր էփիլը:

Մի քիշ անցկացավ, Գիծ աղպերն ասեց.— Ուզում եմ դուս ըւ-  
նեմ:

**Ասեց.** — Հտենց բան կըլնի<sup>7</sup>, կթափի դրանց վրա. պղնձի միջին դուս իլ, առավոտը կթափնք դեն:

— Ո՞նց թե, — ասում ա, — գիծ հո չե՞ս. պղնձի մեջը դուս ըլնեմ, առավոտը կիրակուր էփեմ միջին:

Մի ոտը դրեց ծափի մի ճզբանը, պըպըղեց, սկսեց դուս ըլնիլը, ոտը գնաց, ճուղքը կոտրվեց, ինքն էլ, պղնձին էլ էս ճղքից ընկավ էն ճուղքը, էն ճղքից ընկավ էս ճուղքը, շղըղկալով ընկավ ներքն: Բազրգյանները լեղապատառ ապրանքը թողին ու փախան, Խելոք աղպերը որ տեհավ՝ դրանք փախան, վեր էկավ, նստեցին կրակի կշտին, դրանց էփած կիրակուրը կիրան:

Լիսը որ բացվեց, էդ բազրգյաններից մինն ասեց. — Է՛թանք, տենանք էդ ի՞նչ էր յարաբ:

Էկավ, տեհավ կրակի մոտին էրկու հոգի նստած են:

Աղպերն ասեց. — Ա՛րի, ա՛րի, ա՛րի տաքացի:

Էկավ, նստեց:

Ասեց. — Քեզ ատամ ունե՞ս:

Ասեց. — Բա՛ շունե՞մ:

Ասեց. — Բա՛ց արա, տենանք:

Բաց արեց, Գիծը մի թեժ կրակ վե կալավ ու ճխտեց բերանը, դա վե կալավ, ռա՛փ, ա՛փ, ա՛փ անելով փախավ: Եբոր հասավ հընկորտանց մոտը, հընկերտանքը հարցրին, թե. — Ի՞նչ կա:

Ասեց. — Հա՛պ, պա՛-պա՛:

Ասին. — Խեղճի լեղուն բռնվել ա, ո՛վ ա գիտում, ի՞նչ ա պատահե, — ասին ու վե կացան, փախան:

Զորս օր, հինգ օր ըտեղ մնացին, Խելոք աղպերն ասեց. — Վե կենանք, ըստիան էթանք:

Գիծ աղպերը վե կացավ, բազրգյանների տեղաշորը վե կալավ դրեց պղնձի մեջ, շըլակեց:

Խելոք աղպերն ասեց. — Ա՛յ տղա, ի՞նչ բանի վրա ես, արի փողն ու ոսկեղեննը չոկի վե կալ, տեղաշորի եննուցը ի՞նչ ես ընկել:

Ասեց. — Փողն ու ոսկին քեզ ըլնի, շեմ ուղում, տեղաշորն ինձ: Պտի տանեմ, որ քնեմ:

Խելոք աղպերը փողը, Գիծը տեղաշորը վե կալան, ընկան ճամփա, գնացին: Շատ գնացին, քիչ գնացին, օրվա մի օրը մութն ընկավ, սկսեց վարար անձրև դալ:

Գիծ աղպերը տեղաշորը քցեց, մտավ մեջը տագ արեց, Խելոքը

մնաց անձրեսի տակին թրչվեց, դողաց, աղպորը խնդրվեց, թե.—  
Ես էլ գա՞մ պառկեմ, տաքանամ:

— Չո՛ւզի, չո՛ւզի, զնա՛ քու փողի վրա պառկի, փողն իր վեր  
ոմում:

Ելինքը թեքեց, նստեց աղպերը, դողաց մինչև լիսը բացվեց:  
Երոր լիսը բացվեց, ասեց.— Ա՛րի, ա՛րի, ա՛րի դու էլ պառկի:  
Ասեց.— Էլ ի՛նչ պառկեմ, վե կաց, է՛թանք:

Վե կացան էլի ընկան ճամփա, զնացին:

Գնացին, շատ զնացին, քիչ զնացին, աստված գիտա, մի օր  
արել տվեց, մուլին առավ, բանձրացան սարի գլուխը, տեհան մի  
ճրագ ա էրևում: Գիժ աղպերն ասեց.— է՛թանք էնտեղ:

Խելոք աղպերն ասեց.— է՛թանք ընտեղ ի՛նչ անենք, ըստեղ  
պառկենք, լիսը բացվի, է՛թանք:

Ասեց.— Մութը տեղը խի՛ պառկեմ, հազիր էն ա ճրագ, կէթամ  
ընտեղ կպառկեմ:

Ասեց, քշեց զնաց. Խելոքն էլ ենուցը զնաց:

Գնացին, տեհան մի զաղա, մտան ներսե, տեհան դները պառ-  
կած են. Գիժը աղպոր կուռը բռնեց, տարավ քոմմըքի գլխավիրեը  
պառկացրեց, իրա տեղն էլ ջոկ քցեց, համա Խելոքի քոմնը շտարավ:

Դևերը մնկ-մնկ իրար զարթնացրին, էկան Խելոք աղպոր կուշ-  
տը, թոփ էլան, ասեցին.— Դուք ո՞նց սիրտ արիք, առանց մեզ իմաց  
տալու էկաք ըստեղ պառկեցիք:

Խելոք աղպերն ասեց.— Երոր դուք քնած իք, չվըմըշեցինք ձեզ  
վե կացնենք:

Դևերը երկյուղ արին, թե՛ էրևում ա ըստոնք շատ դողաղ են,  
որ իրանց բանի տեղ էլ չդրին:

Իրար մեջ խոսացին, ասեցին.— Լավն էն ա, մենք ըդրանց հետ  
աղպեր ըլնենք, թե չէ մեզ կուպանեն:

Խորուրդ արեցին պրծան, էկան Խելոք աղպոր մոտը, ասեցին.—  
Մենք օխտը աղպեր ենք, ըլնենք իննը:

— Ըլնե՞նք,— ասեց Խելոք աղպերը,— մի տեղ աշխատենք,  
մի տեղ ուստենք:

Քնեցին իրար հետ, առավոտը վե կացան, Գիժ աղպորն ա-  
սին.— Գնա՛ էս սարի քամակը, չորան կա, մի ոշխար ուզա՛, բե՛ր  
ուստենք:

Դիմագործ վե կացավ զնաց, Հասավ չորանի կուշտը, չորանին ասեց.—Մի չորս-հինգ հատ ոչխար լավերիցը չկա՛, տո՞ւ

Չորանն ասեց.—Դիմ ես, ո՞ւմ ոչխարը տամ:

— Տո՞ւր, — ասեց, — ո՞ւմն ըլնում ա, թող ըլնի:

— Ի՞նչ ես գիծ-դիմ խոսում, — ասեց, — վե կա՛ց ռադ ի՛լ<sup>1</sup>:

Դիմը բարկացավ, վե քցեց չորանին, մի ոտք զրեց մի ոտին, չն մեկել ոտից քաշեց, արեց էրկու, քցեց էն յանը, սադ սուրուն քշեց դպա դմերի տունը:

Դևերը տեհան, որ ոչխարը քոմմա վեր ա կալել, բերել ա, ասեցին.—Էս ի՞նչ խարար ա, ասեցինք՝ մի հատ բեր, հմի սադ գեղը թոփ կըլնի կգա:

Մի հինգ հատ ջկեցին, մնացածը տարան հեռու բրախ տվեցին, էկան:

Մի էրկու օր, իրեք օր արանքը անց կացավ, զոմշի տիկը տվեցին Դիմագորը, ասեցին.—Դնա՛ սարիցը ջուր բե:

Գոմշի տիկը քցեց շըլակն ու զնաց դպա սարը: Հասավ ջրի կուշտը, ասեց.—Հազիր կապեմ, էլ խի՛ եմ տկուլ տանում:

Քաշեց ջրի առաջի մենծ-մենծ քարերը պոկեց, ջուրը կապեց դպա դմերի տունը:

Ջուրն էկավ էրը<sup>2</sup> լցրեց:

Դևերը վե կացան, ուլույ հարա՛յք արին.—Վե կացե՛ք, էթանք ջուրը կտրենք, — Ջուրը կտրեցին, Գժին ասին, — Խի՛ կապեցիր ջուրը:

Ասեց.—Ես հո ձեր նոքարը շեմ<sup>3</sup> ամեն օր էթամ, ձեզ հմար տկուլ ջուր բերեմ. ջուր ա էլի, կապեցի, խմե՛ք:

Արանքը մի քանի օր անց կացավ, ասեցին.—Դնա՛ մեր բաղիցը մի շըլակ ցախ վե կալ, բե՛:

Վե կացավ, պարանը վե կալավ զնաց, չորս-հինգ տարվա տընկիքը քոքով հանեց, դրեց<sup>3</sup> պարանի վրա, համարյա մի սել, շըլակեց, վե կալավ, էկավ:

Դևերը տեհան, որ բաղումը ծառ չի թողե, քոմմա քոքով հանել ա բերե:

<sup>1</sup> Կորի՛ք, զնա՛ (Ս. Բ.):

<sup>2</sup> Այլ (Ս. Բ.):

<sup>3</sup> Այս բառը մենք ենք ավելացրել (Ս. Կ.):

Խելոք աղպորն ասեցին.— Էս ի՞նչ օյին ա հանել քու աղպերը մեր դիմին։ Էլ ըստուց դենը տեղ շղրկենք, ո՞րդե էթում ա, մեղ.վնաս ա տալի։

Էզսի օրը դմերը վե կացան, տնկիթը վե կալան, տարան բաղը, որ թաղաղան տնկնն, էլ գրան շտարան։ Դա մնաց տանը, տեհավ դեերի կնանիթը, էրևսերը դուս էկան արևումը նստեցին շանները քորեցին։

Տեհավ որ շանները քորում են, ասեց.— Խեղճերը շատ կեղ- տոտ են, ջուր դնեմ, ըդրանց լեղացնեմ։

Թերեց իրա բերած պղնձովը ջուր տաքացրեց, համարյա տաս- նէրկու կուժ ջուր կտաներ պղինձը, ընթան վառեց, որ ջուրը եռաց, նոր մեկ-մեկ դրանց ոններիցը բռնեց, ճիտեց պղնձի մեջը, սաքի թե լեղացնում ա, տարավ դրեց տեղաշորի մեջը։

Խելոք աղպերը բաղիցը եղ դառավ էկավ տուն, ասեց.— Մի՛ տենամ ինչ ա անում աղպերս։

Էկավ տուն, Գիժն ասեց.— Թամաշ արա տե՛ս, դմերի կնանոնցն ու էրեխսերանցը լեղացրել եմ, պառկացրել, տես ո՞նց են ծիծաղում։

Խելոք աղպերը տեհավ, որ քոմմա էլ խաշվել են, սատկել։ Գիժը դմերի տանը էլ բրի՛նձ, ձա՛լար, ե՛ղ չի թողե, բերել ա ածել էդ պղնձի մեջը, քաշովի ա էփում։

Խելոք աղպերը ասեց.— Վե կա՛ց, փախնենք, դմերը հրես կդան, մեղ կսըպանեն։

Ասեց.— Ո՞ւր փախնենք, քաշովի եմ էփե, ուտենք, նո՞ր էթանք։

Խելոքն ասեց.— Դու գիտաս, ես փախնում եմ, ուզում ես արի, ուզում ես մի դա, որդի որի ա՝ դմերը կդան, քեզ կսըպանեն։

Խելոք աղպերը փախավ, Գիժը պղինձը վե կալավ դրեց ուսին՝ տաք-տաք, ընկավ աղպոր եննուցը, գնաց։

Դմերը էկան տուն, տեհան որ քոմմա կնանիթն ու էրեխսերը սրպանած են, վե կացան օխտն աղպերներով ընկան դրանց քա- մակր, Խելոք աղպերը եղ թամաշ արեց, տեհավ էդ դմերը օխտն էլ ո՞նց են գալի, զուգումը կոտրվեց՝ նստեց։ Գիժ աղպերն էլ նստեց, պղինձը դրեց առաջն ու կերավ։ Դա ուտում ա, Խելոք աղպերը դո- ղում ա։ Դմերն էկան հասան, Խելոք աղպոր յախեն բռնեցին, էն ա պտի սրպանեին։ Գիժ աղպերը ըսկի տերը շէր ըլնում, նստած իրա հմար ուտում էր, Խելոքը վե կացավ, մի բուռ ֆող վե կալավ, քցեց պղնձի մեջը։ Գիժը հենց իմացավ, թե դմերը վե կալան քշեցին ֆողը

պղնձի մեջը, գիծ-գիծ վե կացավ՝ հասավ դեերին, մի-մին սըպանեց, վե քցեց, օխտին էլ վե քցեց, նո՞ր աղպորն ասեց.— Ա'րի հաց կե, սոված ես:

Աղպերը ուրախացավ, նստեց հետը կերավ:

Երոր կերան պրծան, Խելոր աղպերն ասեց.— էլ ո՞ւր էթանք, բոմմա դեերին սըպանեցիր, էթանք ընդոնց տանը նստենք:

Վե կացան էկան, հասան դրանց տոմը, նստեցին ըտեղ, իրանց հմար ապրեցին:

Քդրանք հասան իրանց մուրազին, ով որ կարոտ ա' նա էլ հասնի իրա մուրազին:

Աստվածանից իրեք հատ խնձոր ընկավ, մեկը՝ ասողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ անկաշ դնողին:

